ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

08 « Ապրիլ » 2019թ.

«Լայքնետ» ՍՊԸ ի դեմս տնօրեն Դավիթ Ամիրյանի, այսուհետ՝ Կատարող, մի կողմից, և ՀՀ ԱՄ Ծաղկահովիտի համայնքապետարանի Ծիլքար գյուղի գյուղապետարանի, ի դեմս համայնքապետ Ն.Հակոբյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Բաժանորդ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Բաժանորդին մատուցել մալուխային ընդհանուր օգտագործման ինտերնետ կապուղու տրամադրման ծառայություններ, իսկ Բաժանորդը պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց՝ Պայմանագրի 3-րդ կետում նշված սակագնային պլանի համաձայն:

2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝

Ծառայությունները մատուցել պատշաճ որակով՝ սույն Պայմանագրում ամրագրված պայմաններին և ժամկետներին համապատասխան:

Կատարել ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ համակցման աշխատանքները: Տրամադրել Բաժանորդին փոխհատուցում Կատարողի մեղքով և վերջինիս կողմից ծառայությունների ոչ պատշաճ կատարման համար Բաժանորդի ունեցած կորստի չափով, եթե այն գերազանցում է 48 ժամը:

2.2 Կատարողը իրավունք ունի՝

Պահանջել Բաժանորդից ժամանակին վճարելու սույն Պայմանագրով մատուցված ծառայությունների դիմաց, Բաժանորդի կողմից պատշաճ վճարումներ չկատարելու դեպքում դադարեցնել ծառայությունների մատուցումը՝ մինչ պարտքի մարումը, Բաժանորդի կողմից ինտերնետ կապը Կատարողի և այլ բաժանորդների համար վնասակար կերպով օգտագործելու դեպքում (SPAM, հակերություն) դադարեցնել ծառայությունների մատուցումը և լուծել սույն Պայմանագիրը 3 աշխատանքային օրյա ժամկետում խնդիրը չլուծելու դեպքում, նախապես այդ մասին ծանուցելուց հետո:

2.3 Կատարողը պատասխանատվություն չի կրում՝

Բաժանորդին պատկանող սարքավորումների անսարքության պատճառով ծառայությունների պատշաճ չընդունման կամ ընդհատման համար, SPAM-ի, հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա հետևանքով Բաժանորդին պատճառված վնասների համար, Բաժանորդի կողմից արտահանված և ներկրված տեղեկատվության բնույթի և անձեռնմխելիության համար:

2.4 Բաժանորդը իրավունք ունի՝

Միակողմանի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին Կատարողին առնվազն 14 օր առաջ գրավոր ծանուցելով:

Պահանջել Կատարողից, որ ծառայություններն իրականացվեն պատշաճ որակով ու ժամկետներում:

Պահանջել վերացնել Կատարողի կողմից աշխատանքների կատարման ընթացքում հայտնաբերված թերությունները:

Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Կատարողի մեղքով ծառայությունները չեն տրամադրվել պատշաճ կամ ժամանակին:

Պահանջել փոխհատուցում Կատարողի մեղքով և վերջինիս կողմից ծառայությունների ոչ պատշաճ կատարման համար իր ունեցած կորստի չափով, եթե այն գերազանցում է 48 ժամը:

2.5 Բաժանորդը պարտավոր է՝

Վճարել փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար հետագայում իր կողմից ընտրած սակագնային պլանի արժեքի համաձայն, ինչի համար ևս կկնքվի երկկողմանի պայմանագիր , որն էլ կդառնա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

3. Սակագնային պլանը և ծառայության արժեքը

Սակագնային պլանը	Արագություն (մբ/վ)/ ամսական ծավալը(ԳԲ)	Ամսական արժեքը /ՀՀ դրամ/	ԱԱՀ–ն	Ընդհանուր ամսական արժեքը /ՀՀ դրամ/
Paymanagir home	**Մինչև 10մբ/վ անսահմանափակ**	**4166.666**	**20%** = 833.33	**5000**

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1. Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև 31.12.2019 թ. և կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին առնվազն 14 օր առաջ գրավոր ձևով ծանուցելով:

4.2. Բաժանորդի կողմից և նրա մեղքով Պայմանագիրը վաղաժամ խզելու դեպքում բաժանորդը կտուգանվի 20000 ՀՀ դրամի չափով:

4.3. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում բաժանորդի կողմից գնված WiFi սարքավորման և բաժանորդի կողմից ձեռք բերված (գնված) այլ սարքավորումների համար՝ շարքից դուրս գալու կամ վնասվելու դեպքում:

5.Եզրափակիչ դրույթներ

5.1. Սույն Պայմանագրի առարկայի հետ կապված այն հարցերն ու հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն Պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

5.2. Պայմանագրում լրացումներ և փոփոխություններ կարող են կատարվել միայն երկկողմանի գրավոր համաձայնությամբ, որոնք կհանդիսանան սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

5.3. Սույն Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կատարող	Բաժանորդ
ՍՊԸ << LikeNet>>	ՀՀ ԱՄ <<Ծաղկահովիտ Համայնքապետարան>>
ՀՀ ՇՄ գ. Սպանդարյան, 7փ, 10տ	ՀՀ ԱՄ Գ. Ծաղկահովիտ հոկտեմբերյան 2
ՀՎՀՀ՝ 05548276	ՀՎՀՀ 05022977
ՎՏԲ Հայաստան բանկ ՓԲԸ	Հ/Հ՝ ՀՀՖՆԽ Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ՝ 16043039596400	Հ/Հ 900482109023
Տնօրեն _____ Դ. Ամիրյան	Համայնքապետ՝ _____ Ն.Հակոբյան